

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

ՄԱՀԷՆ ԱՆԴԻՆ

ԿԱՄին 2-րդ համարին մէջ կը հրատարակուէր Վահէ Օշականէն՝
«Կեանքէն Մահ» քերթուածը: «Մահէն Անդին»ը նոյն շարքին կը պատ-
կանի, ու գրուած է նոյն շրջանին:

Ֆիլմը հագիւ աւարտած
գիտակցութիւնը չորս պատերէն վար կ'առնէմ
կը լուսմ կը չորցնէմ կ'արդուկեմ
մեծ խնամքով կը ծալլեմ
ես տեղը կը դնեմ.

յետոյ

գրպաններս կը պարպեմ
տանս դուռը կը կղպեմ
ու դուրս կ'ելլեմ արուարձանի փողոցները քալելու
միապաղաղ պիրկ անշղարշ լռութեան մէջ
պատուհաններ կը բացուին, շուար դէմքեր թելով կախուեր կը ճօճուին
թաղարները կը ջրեն, էրիկ կնիկ դէմ դիմաց անթարթ անխօս վարագոյրին
ես եւէն

մողմներով օթոցները կը սողան, բանտի պատին կը կոթնի
դէպի հեռուն՝ վաթսունը անց անգործ բոզի անսեռ դաժան
մերկութիւն

պատկեր լկտի սրբութիւն,

մինչեւ երկինք միատարած կուտակուած թանձր վերմակ
ամօթի

որ կը ծածկէ էութիւններ կ'աճապարեն պահուրտիլ
կոյս յղութեան աստուածածին շոշորթ սերմեր պիտի լողան
ժամանակի ճահիճին մէկ կաթիլին մակերեսին

որ կը կախտի ժանգոտ ցամքած ծորակէն

ու խելաչեղ փնտռեն գտնեն թէ ինչու

բառը միայն կրնայ ծնիլ ու ծնունդը ստեղծել՝ դեռ չծնած բառին մէջէն

իր սոսկալի առանձնութեան գոռին հակած

հիմա ճաթեր կոնծեր՝ անգոյն կոնճ անապատի կէսօրին

քաղձ մը անգութ ու անլագ կը ծծէ գայն կը թաքցնէ իր խիպէն

տիեզերքի մեծղի սաւան ամէն վայրկեան մեղմ տարածուն ծփանքով

կը սարսուայ

սպասում մը կը սաւառնի կ'երկնայ լոյսին մէջէն կը բացուի

ու պէտք չունի պահուրտելու

ալ պէտք չկայ անցագրի, ալ չմնաց ժամադրութիւն

բա՛ռը միայն ինքզինքը կը ճանչնայ

որբամոցի գոց սեռեակիին անկիւնը, գետին ճատած, կծկուած:

* *

*

Ա՛յս է եղեր ուրեմն --

ինչ որ լոյսի կուրութեանէն ինձ կը ճայեր իմ աչքերով
ճերմակ բարակ գաւազանը ձեռքին մէջ

ինձի ճամբայ կը բանար ամայութեան պատահէն դուրս
արահետներ կը կորստին դէռ չսկսած ապրելու:

Ա՛յս է եղէր հին դերձակը որ շուրջերնիս կը դառնար
կարելի չէր կաղապարին ձեռք երկարել

ոչ իսկ պոռալ բողոքել

թէ մեզ ինչու անլուծելի խաչբառի վրայ գամեր են
աչքը հաճեր լեզուն կտրեր սիրտը այրեր՝ ու գացեր:

Ա՛յս է եղէր մշուշներէն կը փափսար կը հմայեր կը սպառնար
յուշարարի մութ փոսէն կը կակազէր թունը գլուխը

քիթին տակէն խնդալով

մենք ալ վարը

լուրջի կ'առնենք սուգ կը բռնենք խունկը կ'այրէ աչքերնիս

մինչեւ հասնի շաբաթ գիշեր հազար փշրանք խնճոյքէն ետք

տակնուկրայ խառնիճադանճ սրահին մէջ աստուած հարքեր քէֆը տեղը

կը պարէ

մեզ ալ հետը քաշկոտելով կոտորած շիշի փշրանքներու վրայէն հէյ

թամարս թամարս

արդեօք բան մը կ'երեւա՛յ

կարճուկ մարդէն անդին կայներ միս միմակը լուռ կը ծխէ
սպասելով հունգարացի կառսոնին որ քովը գար, ակամջին

«թէլէֆոնը, Մսիէօ Ժագ»

ու դէռ հեռուն, շատ հեռուն, գիշերուան մէջ տեղ մը մէկը
հեռախօսին քովը նստեր, աչքը դրան, գապարէի ժխորին մէջ,

ու դէռ անդին, խարխալներու արմատներու յիշողութեան պարոյրին
քանի քանի արձագանգներ մէջ մէջի մինչեւ վերջին ու առաջին հարցումը...

որ հարցում չէ -հապա ինչ է- մոլտուքի կախման կէտեր թիթեռնիկի

մինչեւ հոս

որկէ ոչինչ կ'երեւայ պատասխանէ՛ն՝ տախտակներու փակցուցած

աչքերը գոց ցուցարարներ կլոր կլոր կը դառնանք

այս է եղէր կեանք ըստածը

փոթորիկի տերեւները կաթիլները փլատակի պատերուն տակ

կը հաւաքուինք մէկ վայրկեան

հանգչիլ չկայ աճիւններուդ քեզ կը սպասեն ցոյցին պիտի մասնակցին

շուտ ըրէ շուտ... Աթիլլայի զինուորները կ'առեւանգեն կը տանին

քսան չորս ժամ սինեմայի մութին մէջ պիտի շուլլեն բոլորն ալ

պոռչտութեն լաց ու կոծէն բան չի լսուիր, գո՛նէ լոյսը վառէին

բայց ալ ուշ է, միշտ ուշ է, նորէն ծայրէն կը սկսի քեզմէ գաղտնի

կեանքը ծնաւ ու մեռաւ դուն ո՞րք էիր, ի՞նչ կ'ընէիր....:

Բայց վախճաւիք բան չկայ

մահը բառ է

ձրի անպէտ դատարկապորտ րոպէի ովկիանոսին՝ Անտուան լաստի

կրկնապատկեր

կը կայծկլտայ անհպելի ու ոստոստուն ալիքներու պտուկներուն

կը փալփլայ անհասելի առաստաղին

տակը պտուկեր ցոլքին մէջը

Կեանքս գրկած սիրուհիս երգի նման ցնորային կը փախի

զիս հոն լքած անմխիթար — բայց դեռ ողջ եմ

լոյսի ետին բուրգի ծոցին մոմիաները կը մերկանան

թերերուս մէջ պիտի սեղմեմ այդ հոլանի երկունքները

պատանութեան պարտէզներու կախարդային կերպարանքներ

յանկարծ եկած զիս գտնած:

Մահը բառ է որ չի մեռնիր մարդոց հետ

քիչ մը հեռուն կը տնտնայ շուքերուն մէջ

որ գան մարդիկ ճաշի սեղան անգամ մըն ալ յարդարեն

ու ինք մտնէ խառնուի սա աղմկոտ բազմութեան

հաւաքուեր ենք բոլորս մէկ ճաշարանի դրան մօտ

մենք ինչ գիտնանք կղպուած է ներսէն դուրսէն

մեզի ըսին մարդու պէտք կայ մենք ալ եկանք

հիմա հոս ենք, պատրուակ մը գտեր ենք որ մնանք այստեղ

ու քիթերնիս պատուհանին ապակիին փակցուցած

ներս կը նայինք սովահար

կար ու չկար բառ մը կար փախստական ապաստաներ հոն ինկեր է

որք եւ այրի ու կիսամերկ տոբիտ մարմին կծկուեր է անկիւնին

կը մրափէ անքնութեան հազար աւազ երազին մէջ կը մոլորինք

ամեն մէկս խուցի մը մէջ քնաշրջիկ կը թափառինք

վանկերու շուրջ պլլուած ծուէն ծուէն կը տարուինք...

իճչպէս պիտի արթննանք, որու պատմենք երազնիս:

Պէտք է բառը գիճովցնել մէկէն կորզել գաղտնիքը

ու սպաննել

յետոյ յանկարծ այդ գաղտնիքն ալ ձեռք առնել

լռեցնել,

ու ականջ տալ աստուածային զառանցանքին:

Եթէ կրնաս խենթացիր

շեմին նստիր քարին վրայ միս միմակդ տամա խաղա

ամպի շուքը կը սահի, բաղնիքին մէջ ո՞վ է կ'երգէ

ինչ որ կ'իշնայ բառերէն դուրս՝ պիտի խնդայ յախտեան

անձանօթի դիակին շուրջ երեք ժամէ կը սարսուանք՝ լեզուները բռնուած

հսկայակերտ ամբարտակի ճեղքերուն՝ մեղունները բոյն շիներ են

բերնի հոտին ոտքի ցեխին ծեծին թուքին քաքին մէջէն՝ եօթը եղբայր

ծներ ենք

պէնզին ուրկե՞ պիտի առնենք առագաստի կէս գիշերին բաժնուեցանք

ու դեռ զիրար կը փնտռենք կեանքի մահուան մայրերուն

առտու կանուխ խարխուլ անխօս թուրիսթներ պասին շուրջը խումբով կայներ
մինչեւ գիշեր շուարումի պարիսպներում պիտի մայինք
ալ երթալիք պահուրտելիք տեղ չմնաց
ասկէ անդին անհեթեթի մորթին տակէն ոսկորները կ'երեւին
գերեզմանէն ալ ետ դառնալ կարելի չէ
չկայ կայնիլ թումբին քով կառչիլ վիշտին վերջին յոյսին
ոչ ալ յանկարծ թեթեւալ անճիգ ծփալ հողէն վեր.
մտտ ճերմակ ասկերով հեռուէ հեռու իրար բարեւ պիտի տանք
հարցնելով «Ա՛ս է հայրս... ա՛ս է դժբախտ զաւակս»
մարդ աստուծոյ բան մը ըրէք խօսք մը ձայն մը ճշա՛ն մը
ես ինչ գիտնամ, ով մեռած է ով ողջ է մինչեւ քովս հասնիլը
ով որ տեսնեմ սուգ բռնած է սեւեր հագած բան մը կ'ողբայ որո՞ւ հոգը
նեղսի դուրսի հայելիներէն իրենց վրայ կը խնդամ
Կանգառներում շունչը բռնած սենեակներում
հոս հոն թափուած շքեղ յամատ ու անիմաստ բնութեան
միակ պաստառ՝ կը պրկուիմ կը յօրանջեմ բայց արթուն եմ
էութիւնս ամէն ինչի խոհանոցէն մուրացիկի նման կը վոճառի
լալով վրաս կը վազէ կը պաղատի գէթ ե՛ս զինքը լուրջի առնեմ
աս կատակ չէ աս մահն է ծօ՛
անգամ մըն ալ ո՞րտեղ իրար կը հանդիպինք
մենք որ չիմկանք քառուղիի ցեխերում մէջ արկածահար
այլ հոն էինք պարզապէս պատահական անցորդներ
շուրջը կեցեր այսքան տարի կը դիտենք զայն
փառք աստուծոյ կեանքէն ոչինչ հասկցանք մահն է հիմա միակ յոյսը
իրմէ անդին իմաստներու արձագանգը բերելու
գուցէ ան է որ կը ծածկէ մերկութիւնը
գետին փռուած արիւնլուայ անծանօթին, ով գիտէ:

Մեծդի անգղը աղտոտ հզօր իր թեւերում թափ կու տայ
շաղիղներու ժահին մէջէն բորենիներ գարնան բոյրին կը բացուին
աճիւնները լեղի դեղի համ մը ունին կաղ սուրբերու լեզուին վրայ
վերջին կայանն է պէնգիւնի՝ այդպէս անտէր անանուն
հազար մղոն անապատ մը կը փռուի դէպի առա՛ջ թէ դէպի ետ
յիմար բոյսի արմատներէն մինչեւ քարէ պարագիծը անեղնագոռ
նստաններու լեռներու

դիմակաւոր տարաշխարհիկ ու վիթխարի թափօրները անշարժացեր
փոշիին մէջ կը ապաստեն....:

Մի՛ սարսափիք բառերէն

անոնք մեզմէ շատ ատելի շուարած են եղածէն

որ այս վայրկեան արեւուն հետ կը ծագի անշարժ տրտում կը տարածուի
ամէն կողմէն՝ դէպի տուն:

«Ես մեռա՞ծ եմ» ձայնը հագիւ կը լսուի
 մեծ համերգ կայ օրն ի բուն գաճաճ ու մերկ բջիջներու
 փողոցներէն անտառներէն նրբանցքներէն հաւաքուած
 տանա մէջը դագաղին շուրջ կը պարեն հա կը պարեն
 արուարձանի բնակիչներն ամբողջ արդէն եկած են
 սպաննուած հարսն ու փեսան գետին պառկեր կողք կողքի
 կին ծպտուած ու շփարուած տղամարդիկ՝ պատերու տակ կը թափառին
 քին-աստուածներ սարկաւագի հագուստով՝ մէջտեղ ինկեր գործ կը փնտռեն
 ուր որ դառնամ վարագոյրներ դանդաղօրէն կը բացուի՞ն թէ կը գոցուին
 ինձմէ առաջ ու ինձմէ ետք
 փողուած ծովափ աւազներուն եւ արեւուն աղօրիքին.
 ես միշտ տարբեր եղած եմ
 գայթակրութեան ապիմաստին հակասութեանց գրդանքէն դժուր աքսորուած
 ճղճիմ խցան՝ անջրպետի սա վիթխարի շիշէն փախչող հոսքին դէմ:

Ես կը մերժեմ կեանքի մահուան զինադուլը
 վայրկեաններուս աւելցուքով կարկտնուած ձեռքի տակ է կարգադրուած
 անմահութիւն
 որու կուշտին կրակ այտերով մտտ հարսեր սրսփալով կ'երկնման
 միճչեւ գծուին կնճիռները աչքերու շուրջ սեւ կապէ արիւնները վերջ գտնեն:
 Իմ կոխս անուն չունի բայ չունի
 ինքնիր մասին ինքնիր համար իրմէ իրեն բողոք է
 իր ահաւոր անօթութեան ու վատնումին
 մինչ մեքենան սրտերու մէջ կը դղրդայ կը տորրէ կարելի չէ կեցնել
 մարդիկ կարգով հիպոնոսացած՝ կ'անշարժանան ժամը ժամուն ու կը
 տարուին,
 լոկ իմ մահս ինձմէ առաջ ժամադրութեան կը հասնի՝ բայց չսպասեր
 գտածը կ'ստնէ ու կը մեկնի
 եւ կը մնանք
 ինչ որ ինձի ժառանգ ինկաւ կեանքի սէրէն երջանկութեան պատրանքէն
 մարդ ըլլալու վրիպանքէն
 ինչ որ մնաց գոյականին երազէն:
 Տուն կը մտնէ
 դոտ պատուհան կոնակի վրայ կը բանայ
 պարտէզ կ'ելլէ ցաւկելով
 կը լուացուի անձրեւին տակ
 կը չորցուի հովուն շունչով
 մեծ խնամքով կը ծալլուի տերեւին մէջ
 կը պլլուի լոյսի շողին

կը կծկուի փոշիի մը չոր գիրկը,
յետոյ
շարքի կ'անցնի կայնողներուն ետեւը, կ'անշարժանայ:

Հետուն կեցած
կը դիտեմ:

30 Յուլիս 1982, Ռէտնըր, Փէնսիլվանիա

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ